● ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ

ԼՂԻՄ. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը մարզի աշխատավորներին կոչ արեց դադարեցնել գործադուլները և Ազգային խորհրդին պարտավորեցրեց ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները մարզի ամբողջ տարածքում աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու համար:

Օգոստոսի 19-ին Ազգային խորհրդի նախաձեռնությամբ Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում տեղի ունեցավ արտոնյալ միտինգ: Բոլոր ելույթ ունեցողները հավանություն տվեցին Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի աշխատանքներին, նրա որոշմանը և բոլոր հարցադրումներին: Միտինգի մասնակիցները ողջունեցին համագումարի կողմից Ազգային խորհրդի ստեղծումը:

Միտինգը միաժամանակ քննարկեց մարզում գործադուլի դադարեցման վերաբերյալ համագումարի կոչը: Այդ առթիվ այսօր՝ օգոստոսի 21-ին, արդյունաբերական ձեռնարկություններում և հիմնարկություններում տեղի են ունենում գործարանային ժողովներ, ուր առաջ են քաշվում կոնկրետ խնդիրներ գործադուլի դադարեցման համար: Աշխատավորության մի մասը գտնում է, որ անհրաժեշտ է գործադուլը շարունակել մինչև արցախյան հարցի արդարացի լուծումը: Մյուս մասը գտնում է, որ ժամանակակից պայմաններում գործադուլը անհեռանկարային է և պետք է փոխել պայքարի ձևը, ուժեղացնել համախմբվածությունն ու միասնությունը:

Չորրորդ ամիսն է չեն աշխատում ձեռնարկությունները: Անգործության են մատնվել սարքավորումներն ու տեխնիկան: Գործարաններն ապահովված չեն հումքով: Անհրաժեշտ է կարգի բերել նյութատեխնիկական բազան: Այսօր շատ ձեռնարկություններում կարգի են բերվում սարքավորումները, աշխատանքներ են կատարվում գործարանները հումքով ապահովելու, տեխնիկատնտեսական բազան վերականգնելու ուղղությամբ:

Արդեն կիսով չափ աշխատանքի են դուրս եկել տրանսպորտային ձեռնարկությունների, շինարարական հարթակների, հիմնարկների կոլեկտիվները:

Ազգային խորհուրդը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները մարզում աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու համար:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(մեր սեփ. թղթ.)
Ստեփանակերտ